Հայարփի Քեշիշյան
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի սովորողների բանավեճի ակումբի ղեկավար
Էլ.հասցե՝ hayarpikeshishyan2018@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.2-257

ԲԱՆԱՎԵՃԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴ

Սույն հոդվածում ուսումնասիրվում է բանավեճը՝ որպես ուսուցման ակտիվ մեթոդ՝ ընդգծելով դրա դերը ժամանակակից կրթական գործընթացում: Ներկայացվում են տեսական հիմքերը, բանավեճի միջոցով ուսումնական արդյունքների և մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորությունները, ինչպես նաև դիտարկվում է բանավեճի կիրառման հնարավորությունը ուսումնական միջավայրում՝ տարբեր դասընթացների շրջանակներում:

Հոդվածում դիտարկվում է բանավեճի դերը սովորողների ակտիվ մասնակցության ապահովման գործում, ինչպես նաև ներկայացված են բանավեճի՝ որպես ուսուցման արդյունավետ մեթոդի գիտական հիմնավորումներն ու օրինակները:

Վերլուծվում են բանավեճի ներդրման մեթոդական կողմերը, դասավանդողի դերը դրա կազմակերպման գործընթացում, ինչպես նաև բանավեճի կիրառման արդյունքում սովորողների մոտ քննադատական մտածողության, հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտությունների ամրապնդումը:

Հոդվածի վերջում արված է հետևություն առ այն, որ բանավեճը ոչ միայն ուսուցման մեթոդ է, այլև ռազմավարական գործիք՝ սովորողների անձնային և մասնագիտական ձևավորման համար:

Հիմնաբառեր. ուսուցման ակտիվ մեթոդ, բանավեճ, քննադատական մտածողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, քաղաքացիական գիտակցություն, ուսումնական գործընթաց:

«Սեփական մտքերը հիմնավորելու ընդունակությունը պարզապես հաղորդակցման հմտություն չէ, այլ միջոց՝ բացահայտելու նոր հորիզոններ՝ ինչպես քեզ համար, այնպես էլ շրջապատի»:

Օ.Վ.Կուզնեցով (1947–2015), գրող

Ներածություն

Ժամանակակից կրթության հիմնական մարտահրավերներից մեկը սովորողների ակտիվ ներգրավվածությունն է ուսումնական գործընթացում: Կրթական գործընթացը զարգանում է learner–centered (սովորողակենտրոն) մոտեցման ուղղությամբ, որտեղ սովորողները հանդես են գալիս ոչ միայն որպես գիտելիքի ընկալողներ, այլ նաև որպես ակտիվ մասնակիցներ: Այս համատեքստում ուսուցման ակտիվ մեթոդների դերը գնալով աճում է՝ նպաստելով քննադատական մտածողության, վերլուծական կարողությունների, ինքնարտահայտման և թիմային աշխատանքի զարգացմանը:

Մեթոդը հունարեն (methodos) բառ է, որը թարգմանաբար նշանակում է ճշմարտությանը, սպասված արդյունքին հասնելու ուղի, ձև, եղանակ, միջոց (Մալխասեանց, 1944, էջ 1436), այլ կերպ ասած՝ այն ըմբռնվում է իբրև գործունեության եղանակների ու հնարների համակարգ, որն ապահովում է տվյալ գործունեության արդյունավետ իրականացումը:

Բանավեճը ներկայացվում է որպես ուսուցման ակտիվ մեթոդ՝ հիմնված տարբեր դիրքորոշումների հակադրման և փաստարկման վրա (Ամիրջանյան, Սահակյան, 2005): Եվ որպես ակտիվ ուսուցման մեթոդներից մեկը՝ բանավեճը դուրս է գալիս դասավանդման ավանդական մեթոդների սահմաններից՝ վերածվելով վերլուծության, համագործակցության և հռետորության հզոր գործիքի: Բանավեճն առանձնանում է իր բազմաբնույթ առավելություններով՝ հնարավորություն է տալիս ուսանողներին արտահայտել սեփական կարծիքը, հիմնավորել այն փաստարկներով, հակադրվել այլ տեսակետներին՝ պահպանելով հարգալից և կառուցողական երկխոսություն: Բանավեճի կիրառումը ուսումնական գործընթացում նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, քննադատական մտածողության զարգացմանը և հանրային խոսքի հմտությունների ձևավորմանը (Kennedy, 2007, էջ 186–188): Բացի այդ, բանավեճը խթանում է տեղեկատվության որոնման, ընտրության, վերլուծության և ներկայացման հմտությունները, որոնք կենսական նշանակություն ունեն 21–րդ դարում:

Այսօր, երբ նորարարությունները դարձել են կրթական գործընթացի անբաժան մաս, ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը բացում է անսահման հնարավորություններ թե՛ դասավանդողների, թե՛ սովորողների համար: Քննադատական մտածողության զարգացումը, սեփական դիրքորոշման փաստարկումը և զրուցակցի կարծիքը լսելու ունակությունն այն կարևոր կարողություններն են, որոնք ձևավորում են ապագայի անհատին: Նման մոտեցումները դասընթացները վերածում են գրավիչ ու իմաստալից «ուղևորութ-

յան», որտեղ յուրաքանչյուր սովորող դառնում է հետազոտող, ստեղծագործող և առաջնորդ:

Դասավանդողների համար այս մեթոդների ներդրումը միայն մարտահրավեր չէ, այլ նաև հնարավորություն՝ դուրս գալու դասավանդման ավանդական շրջանակներից և ոգեշնչելու սովորողներին նոր ձեռքբերումների համար: Այս գործիքներն օգնում են ոչ միայն դասընթացը դարձնել ավելի կենդանի, ակտիվ և արդյունավետ, այլ նաև փոխանցել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են իրական կյանքում:

Յուրաքանչյուր իմաստալից և հետաքրքիր դասընթաց մեկ քայլ է սովորողի ներուժի բացահայտման ճանապարհին:

Հոդվածի նպատակն է հիմնավորել բանավեճի կիրառելիությունն ու արդյունավետությունը որպես ուսուցման ակտիվ մեթոդ ժամանակակից կրթական գործընթացում: Հոդվածի խնդիրներն են՝ վերլուծել բանավեճի տեսական հիմքերը, ներկայացնել դրա կրթական և դիդակտիկ առավելությունները, բացահայտել կիրառման մեթոդաբանական առանձնահատկությունները տարբեր առարկաների շրջանում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է տեսական վերլուծության, համադրական և փաստաթղթային ուսումնասիրության մեթոդներով: Վերլուծվել են տարբեր գիտական մենագրություններ, հոդվածներ և կրթական մեթոդական աշխատություններ, որոնք վերաբերում են ակտիվ ուսուցման և բանավեճի մեթոդի կիրառմանը կրթության մեջ:

Բանավեճի տեսական հիմքերը

Բանավեճը հնագույն հռետորաբանության տարր է, որն այսօր վերաձևակերպվել է որպես ժամանակակից ուսուցման մեթոդ: Այն հիմնված է կրթության կոնստրուկտիվիստական մոտեցման վրա, ըստ որի՝ սովորողն ինքը պետք է կառուցի իր իմացական կառուցվածքները, ինչն առավել արդյունավետ է քննարկման, հակադրման և քննադատական մտածողության միջոցով (Fosnot, 2005, էջ 32–34):

Բանավեճը՝ որպես ուսուցման ակտիվ մեթոդ, ունի խորքային տեսական հիմքեր, որոնք ձևավորվել են կրթության, փիլիսոփայության, լեզվաբանության և հոգեբանության համահունչ փոխազդեցության արդյունքում: Այն առանձնանում է ուսումնական գործընթացին մոտեցվելու ինտեգրատիվ և բազմաշերտ տեսլականով՝ խթանելով սովորողի ակտիվ ներգրավվածությունն ու քննադատական մտածողության զարգացումը:

Բանավեճի արմատները գալիս են հին հունական փիլիսոփայությունից: Սոկրատեսը բանավեճը օգտագործում էր որպես ճշմարտության բացահայտման եղանակ՝ հիմնվելով երկխոսության և հարցադրումների մեթոդի վրա: Նա գտնում էր, որ մտքի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են առնվազն երկու հոգի: Ճշմարտությունը սովորաբար ծնվում է նպատա-

կաուղղված զրույցների ու բանավեճի ժամանակ: Սոկրատեսը, վարպետորեն վարելով վեճը, աննկատելիորեն հասնում էր նրան, որ զրուցակիցը բախվում էր սեփական դատողություններում թույլ տված սխալների ու հակասությունների հետ և, «անհանգստություն» զգալով, ձեռնամուխ լինում նոր որոնումների: Նա իր մեթոդը (մաևտիկա) նմանեցնում էր մանկաբարձուհու արհեստին: Ինչպես վերջինս օգնում է երեխայի ծնվելուն, այնպես էլ ինքը հմուտ վիճաբանության ու հարցազրույցի միջոցով նպաստում էր զրուցակցի գլխում մտքերի առաջացմանը: Սոկրատեսյան երկխոսությունը սոսկ երկու տեսակետների բախում չէ, այն ավելի շուտ ճշմարտության հայտնաբերմանն ուղղված համատեղ հետազոտություն է: Սոկրատեսյան մեթոդը խթանում էր քննադատական մտածողություն, վարում էր սովորողին դեպի ինքնանկախ դատողություն և վերլուծական մոտեցում (Кессиди, 1988, էջ 58–60):

Բանավեճը՝ որպես կրթական պարադիգմ[1], վերաբերում է հին հույներին, բայց այն լայնածավալ հետագիծ ունի նաև ժամանակակից կրթական համակարգում: Իր պատմության ընթացքում բանավեճը եղել է որքան մրցակցային խաղ, այնքան էլ տարբեր առարկաների արդյունավետ ուսուցման մեթոդ: Համադրվելով գիտելիքի ստացման հզոր ձգտումով՝ բանավեճն առաջացնում է ալքիմիական ռեակցիա, որը ոգեշնչում է թե՛ դասավանդողներին, թե՛ սովորողներին (Bartanen & Littlefield, 2014, 155–173):

Գիտական ուսումնասիրությունների հիման վրա տեսական հիմքերի ամրապնդումը՝ բանավեճի մեթոդի արդյունավետության վերաբերյալ

Բանավեճի մեթոդը կրթության ոլորտում արժանացել է միջազգային մի շարք գիտնականների ուշադրությանը, որոնք փաստում են դրա արդյունավետությունը ուսուցման բազմաբնույթ գործընթացներում: Ըստ վերջին տարիների ուսումնասիրությունների՝ բանավեճը նպաստում է սովորողների մոտ ոչ միայն քննադատական մտածողության, այլ նաև հաղորդակցման, սոցիալական փոխազդեցության և քաղաքացիական ներգրավվածության զարգացմանը:

- **Քննադատական մտածողության զարգացում**:

Ռ. Քենեդին (2007) ցույց է տալիս, որ լսարանային բանավեճերը խթանում են սովորողների վերլուծական կարողությունները՝ օգնելով գնահատել փաստարկները, կառուցել տրամաբանական եզրահանգումներ և գործնականում կիրառել վերացական գաղափարներ:

- **Մոտիվացիայի և ներգրավվածության խթանում**:

Ռոյը և Մաչիետը (2005) փաստում են, որ բանավեճը բարձրացնում է սովորողների ներգրավվածությունն ուսուցման գործընթացում՝ հատկապես մրցակցության և սոցիալական համագործակցության տարրերի միջոցով:

- **Հաղորդակցական և հուզական հմտությունների զարգացում**:

Գուդվինի ուսումնասիրության (2003) արդյունքում պարզվել է, որ բանավեճին մասնակցող սովորողներն ավելի լավ են զարգացնում իրենց ունակությունները՝ արտահայտել կարծիք, լսել հակառակ տեսակետը, հար-

1 «Պարադիգմ» բառը հունարեն «παράδειγμα» գոյականի ածանցյալն է, նշանակում է «կաղապար, օրինակ, մոդել, նմուշ», որը միավորում է երկու բառակապակցություն՝ παρά «մոտ» և δεῖγμα «ցուցադրված, նմուշ, օրինակ» արմատից բխող δείκνυμι «ցույց տալ, մատնանշել»

գանքով խոսել և վարել հարց ու պատասխան:

Բազմառարկայական կիրառելիություն:

Զարեն և Օթմանը (2013) իրենց հետազոտության մեջ ներկայացնում են բանավեճի կիրառման փորձը տարբեր առարկաներում՝ իրավունքի, լեզվաբանության, պատմության, քաղաքագիտության և այլն, փաստելով դրա արդյունավետությունն ինչպես միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթությունում:

- **Ինքնավստահության և առաջնորդության ձևավորում**:

Օմելիչևան (2007) իր հոդվածում փաստում է, որ քաղաքական գիտությունների սովորողների մոտ բանավեճը նպաստում է ինքնուրույն դատողության, հանրային խոսքի, ինչպես նաև վստահության և առաջնորդության հմտությունների զարգացմանը:

Կրթական հոգեբանության տեսանկյունից, բանավեճը խթանում է մեթակոգնիտիվ (վերճանաչողական) գործընթացները՝ սովորողին դնելով ակտիվ վերլուծության, որոշման կայացման և ինքնակառավարման դիրքում (King & Kitchener, 2004, էջ 5–18):

Բանավեճը նպաստում է ոչ միայն ակադեմիական առաջընթացին, այլ նաև զարգացնում է այն հիմնական հմտությունները, որոնք անհրաժեշտ են մեր դարում աշխատաշուկայում հաջողության հասնելու համար: Ժամանակակից «թիմային տնտեսության» պայմաններում կարևոր է, որ սովորողները կարողանան արդյունավետորեն աշխատել խմբերում, ինչի համար պահանջվում է համագործակցության մի շարք կարողությունների զարգացում: Դրանց շարքում են՝

- այլընտրանքային տեսակետների ունկնդրումն ու ընկալումը,
- այդ տեսակետների ինտեգրումը միասնական, ավելի ընդգրկուն մոտեցման մեջ,
- դրանց կիրառումը գործնականում՝ մասնագիտական, բիզնեսի կամ արդյունաբերական խնդիրներ լուծելու նպատակով:

Բանավեճն, այս առումով, սովորողներին տալիս է հնարավորությունը՝ ոչ միայն խթանելու վերլուծական մտածողությունն ու խոսքի հմտությունները, այլ նաև ձևավորվելու որպես նորարար, ճկուն և համագործակցող մասնագետներ: Այն նրանց հնարավորություն է տալիս զարգացնել առաջնորդական որակներ և մշակել անհամաձայնության պայմաններում արդյունավետ ու հիմնավորված որոշումներ կայացնելու կարողություն՝ մի աշխարհում, որը հաճախ պահանջում է արագ, բայց գիտակցված արձագանք (Broda-Bahm, Kempf & Driscoll, 2004, էջ 7–8):

Ինչպես նշում են Ալֆրեդ Մնայդերն ու Մաքսվել Շնուրերը իրենց բարձր հեղինակություն վայելող աշխատանքում՝ *«Բազմակողմանիություն. բանավեճ ուսումնական ծրագրի շրջանակում»* (Snider & Schnurer, 2006, էջ 6), բանավեճը կարելի է կիրառել գրեթե ցանկացած կրթական կամ մասնագիտական միջավայրում՝ որպես հզոր գործիք ուսուցման արդյունավետության բարձրացման և գիտելիքների կիրառման մակարդակի խորացման համար:

Նրանց դիտարկմամբ՝ ցանկացած իրավիճակում, երբ առկա են առնվազն

երկու կողմ, որոնք հնարավորություն ունեն հավասար ներկայացնելու իրենց դիրքորոշումը՝ առաջնորդվելով որոշումների կայացման տրամաբանական ռազմավարությամբ, հնարավոր է իրականացնել լիարժեք բանավեճ: Այս գործընթացի կառուցվածքն ինքնին կարող է լինել բազմաձև՝ ելույթների տևողությունից և քանակից մինչև որոշման տեսակը: Որոշումը կարող է նշանակել կողմերից մեկի հաղթանակ, բայց կարող է արտահայտվել նաև տարբեր կարծիքների համադրմամբ ձևավորված նոր հեռանկարի ստեղծմամբ:

Բանավեճի յուրահատկությունն այն է, որ այն ոչ միայն որոշակի թեմայի քննարկում է, այլև սովորողներին և դասավանդողներին մղում է գիտելիքի ընկալման շարունակական գործընթացի, որտեղ յուրաքանչյուր դիրքորոշում կարող է վերաձել սոցիալական և մասնագիտական որոշումների կայացման արդյունավետ գործիքի:

Բանավեճի դերն ուսումնական գործընթացում

Բանավեճը կարող է օգտագործվել տարբեր կրթական մակարդակներում՝ սկսած միջնակարգ դպրոցից մինչև բուհական և մասնագիտական ուսուցում: Կրթության մեջ, ինչպես նախորդիվ արդեն նշվել է, բանավեճի մեթոդի ներմուծումը խթանում է՝

- **սովորողի մոտիվացիան**,
- **քննադատական մտածողությունը**,
- **հանրային խոսքի վարժեցումը**,
- **քաղաքացիական գիտակցությունը**:

Կրթական արդյունքների մակարդակում սա արտահայտվում է **համընդհանուր ուսումնական կարողությունների ձևավորմամբ** և նպաստում է ոչ միայն թեմայի խոր ընկալմանը, այլև՝ հաղորդակցման, թիմային աշխատանքի, լսելու և կառուցողական հակադրվելու կարողությունների զարգացմանը: Բանավեճը նաև օգնում է սովորողներին զարգացնել լեզվաբանական կարողությունները, բարելավել խոսքի կազմակերպումը, իսկ որոշ առարկաներում նաև նպաստում է թեմայի բազմակողմանի ըմբռնմանը:

Բանավեճի կիրառման ամենամեծ արժեքներից է քննադատական մտածողության ձևավորումը: Սա գործընթաց է, որի ընթացքում սովորողները սովորում են վերլուծել տեղեկատվությունը, ձևակերպել հիմնավոր հարցադրումներ և կառուցել տրամաբանված փաստարկներ: Նրանք ձեռք են բերում հմտություններ՝ տարբերակելու մանիպուլյատիվ մոտեցումները, գնահատելու ներկայացված տեղեկությունների վստահելիությունը և առաջարկելու կշռադատված լուծումներ:

Օրինակ՝ «Տեխնոլոգիաների ազդեցությունը կրթության վրա» թեմայով բանավեճին պատրաստվելիս սովորողները պետք է ոչ միայն հավաքեն համապատասխան տեղեկատվություն, այլև վերլուծեն, թե ինչպես է այն համադրվում իրենց դիրքորոշման հետ: Այս գործընթացը պահանջում է հստակ մտածողություն և տրամաբանական կառուցվածք, քանի որ հուզական կամ անհիմն պնդումները հեշտությամբ բացահայտվում են ընդդիմախոսների կողմից:

Քննադատական մտածողությունն ուժեղանում է նաև հակառակ կողմի

փաստարկների վերլուծության ընթացքում: Բանավիճողները սովորում են հայտնաբերել հակափաստարկների թույլ կողմերը և ձևակերպել այնպիսի հարցեր, որոնք կարող են փոխել քննարկման ուղղությունը:

Այս ամենի արդյունքում բանավեճը վերածվում է հզոր ուսուցողական գործիքի, որն օգնում է ձևավորել մտավոր ինքնուրույնություն, ինչը չափազանց կարևոր է ժամանակակից տեղեկատվական հագեցած և բազմաշերտ աշխարհում:

Բանավեճը գնալով ավելի մեծ ճանաչում և կիրառություն է ստանում տարբեր առարկայական ոլորտներում, ինչը վկայում է այն մասին, որ այս մեթոդի արժեքներն ու դրական ազդեցությունները գնահատվում են ոչ միայն հռետորաբանության կամ հասարակագիտության շրջանակներում:

Բանավեճը՝ որպես ուսուցման մեթոդ, հատկապես արդյունավետ է այն ոլորտներում, որտեղ ուսումնասիրվում են բազմակողմ, արժեքային և վերլուծական բնույթ ունեցող երևույթներ: Այս առումով բանավեճը, հատկապես արդյունավետ է իրավագիտության, հասարակագիտության, պատմության, քաղաքագիտության, աշխարհագրության, կենսաբանության, սոցիոլոգիայի, լեզվաբանության և գրականության դասընթացներում[2]:

1. Իրավագիտության դասընթացներում

Իրավագիտության ոլորտում բանավեճն ունի կարևոր դիդակտիկ նշանակություն: Այն զարգացնում է փաստարկման իրավական կարողությունները: Սովորողը սովորում է գործադրել օրենսդրական հիմքեր, նախադեպեր, իրավական տրամաբանություն: Բանավեճն օգնում է նրան ինքնուրույն դիրքորոշում ձևավորել և պաշտպանել այն: Նման ձևաչափը սովորողին պատրաստում է դատական պրակտիկայի, փաստաբանական աշխատանքի և հանրային իրավական խոսքի համար:

2. Հասարակագիտության դասընթացներում

Հասարակագիտությունը քննարկում է արժեքային և գաղափարական խնդիրներ: Բանավեճի միջոցով սովորողները ձևավորում են քննադատական մտածողություն և զարգացնում են քաղաքացիական դիրքորոշումներ:

3. Լեզվաբանության և գրականության դասընթացներում

Լեզվաբանությունն ու գրականագիտությունը բանավեճի կիրառման միջոցով օգնում են սովորողներին զարգացնել հաղորդակցման հմտությունները: Բանավեճը նպաստում է լեզվաբանական կարողությունների զարգացմանը՝ ինչպես բանավոր, այնպես էլ գեղագիտական խոսքի ձևավորման տեսանկյունից: Գրականության մեկնաբանության շուրջ բանավեճը բացա-

2 Իհարկե, «Բանավեճի մշակույթի»՝ որպես ուսումնական մոտեցման տարածումը չի սահմանափակվում վերոթվարկյալ առարկաների պարագայում, այն մեծ տարածում ունի նաև այլ առարկաների պարագայում ևս, ինչպիսիք են, օրինակ, բնագիտական առարկաները՝ ֆիզիկան, քիմիան, բնագիտությունը, ինչպես նաև՝ կինոգիտությունը, տեխնոլոգիան և այլն:

հայտում է տարբեր գնահատականներ և վերլուծական մոտեցումներ. սովորողները կարող են քննադատական կերպով դիտարկել գրական ստեղծագործություններում արժեքային հարցերը:

4. Սոցիոլոգիայի դասընթացներում

Սոցիոլոգիան, որպես հասարակության ուսումնասիրության գիտություն, ներկայացնում է սոցիալական կառուցվածքների, խմբերի, արժեքների բազմազանություն: Այն ուսումնասիրում է սոցիալական հարաբերությունները, խմբային վարքագիծը, հանրային կարծիքը և ինստիտուտները: Բանավեճն այստեղ հանդիսանում է իրական սոցիալական գործընթացների վերաիմաստավորման գործիք:

5. Քաղաքագիտության դասընթացներում

Քաղաքագիտությունը բանավեճի միջոցով սովորողին հնարավորություն է տալիս քննարկել իշխանության ձևերը, ժողովրդավարության գործառույթները, քաղաքական գաղափարախոսությունները: Այս մոտեցումը խթանում է սովորողի վերլուծական և քաղաքացիական մտածողության զարգացումը, քանի որ նրան մղում է անդրադառնալ ոչ միայն քաղաքական գործընթացներին, այլև դրանց խորքային շարժիչ ուժերին:

6. Պատմության դասընթացներում

Պատմության ուսուցման մեջ բանավեճը թույլ է տալիս բացահայտել պատմական իրադարձությունների տարբեր մեկնաբանություններ: Սովորողները սովորում են, թե ինչպես վերլուծել պատմական աղբյուրները, ինչպես կառուցել պատմական համատեքստերը և ինչպես բացահայտել պատմական պատճառահետևանքային կապերը:

7. Աշխարհագրության դասընթացներում

Աշխարհագրության դասապրոցեսում բանավեճի մեթոդը արդյունավետ է հատկապես վիճահարույց և հիմնախնդրային թեմաների դեպքում, օրինակ՝ կլիմայական փոփոխություններ, բնական ռեսուրսների օգտագործում և այլն: Բանավեճը զարգացնում է սովորողների տարածական տրամաբանությունը, նրանք սովորում են տարբերել փաստը կարծիքից, պաշտպանել դիրքորոշում՝ հիմնվելով քարտեզների, վիճակագրական տվյալների և տեղաբնույթ առանձնահատկությունների վրա:

8.Կենսաբանության դասընթացներում

Կենսաբանության ուսուցման մեջ բանավեճի մեթոդը նույնպես ունի առավելություններ. այն զարգացնում է էթիկական վերլուծության կարողությունը, ձևավորում է փաստարկված դիրքորոշում՝ կենսաբանական և բժշկա-

կան հիմնախնդիրների շուրջ և օգնում է գիտական մտածողության ամրապնդմանը: Օրինակ՝ «ԳՄՕ. Սպառնալիք, թե՞ փրկություն մարդկության համար» դիլեմայի քննարկումը ստիպում է սովորողներին ուսումնասիրել գիտական հոդվածներ, հետազոտական տվյալներ և գիտնականների հակադարձ կարծիքներ:

Բացի առանձին առարկաների շրջանակներում կազմակերպվող բանավեճերի, հնարավոր է կազմակերպել նաև միջառարկայական բանավեճեր: Ժամանակակից կրթության մեջ միջառարկայական բանավեճերը խթանում են համակցված մտածողությունը՝ թույլ տալով սովորողներին տարբեր առարկայական գիտելիքները կիրառել միասնական խնդիրների լուծման մեջ: Միջառարկայական բանավեճերն ու քննարկումները զարգացնում են սովորողների ունակությունը՝ տեսնելու գիտելիքների փոխկապակցվածությունը և կիրառելու դրանք իրական իրավիճակներում: Նման ձևաչափերը, հատկապես արդյունավետ են նախագծային և հետազոտական աշխատանքների շրջանակներում:

Օրինակային միջառարկայական թեմա է՝ *«Ատոմային էներգիան՝ զե՞նք թե՞ կյանքի աղբյուր»*, որտեղ համադրվում են ֆիզիկան, քիմիան և պատմությունը, իսկ գլոբալ անվտանգության հարցերի ներգրավմամբ նաև՝ հասարակագիտությունը:

Մեկ այլ արդիական թեմա է՝ *«Տեխնոլոգիաների զարգացումն ազդո՞ւմ է հասարակության մեջ անհավասարության վրա»*, որը միավորում է ինֆորմատիկայի, սոցիոլոգիայի և տնտեսագիտության բաղադրիչները:

Նման բանավեճերը հնարավորություն են տալիս սովորողներին դիտարկել խնդիրը տարբեր տեսանկյուններից, բացահայտել առարկաների միջև հատման կետերը և զարգացնել համալիր տեղեկատվության վերլուծության կարողություններ:

Բանավեճի ձևաչափերն ուսումնական ծրագրի մեջ հաջողությամբ ներմուծելու համար անհրաժեշտ է լիարժեք օգտագործել դրանց կրթական և դաստիարակչական ներուժը: Նմանատիպ պարապմունքները կարող են ինտեգրվել ինչպես հիմնական դասընթացների մեջ, այնպես էլ ֆակուլտատիվ և արտադասարանային (արտալսարանային) միջոցառումների շրջանակում: Բանավեճի ինտեգրումն ուսումնական գործընթացում նպաստում է դասաժամերի առավել հետաքրքիր և կիրառելի դարձնելուն՝ այդպիսով ստեղծելով բարենպաստ պայմաններ սովորողների բազմակողմանի զարգացման և ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան հմտությունների ձևավորման համար:

Շատ կարևոր է նաև խստորեն պահպանել բանավեճի կազմակերպման **մեթոդաբանական սկզբունքները:** Որակյալ ուսումնական բանավեճ կազմակերպելը պահանջում է ոչ միայն տեխնիկական պատրաստվածություն, այլ նաև մեթոդական հստակեցում և կառուցվածքային մոտեցում: Բանավեճի արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ գործընթացը սահմանվում է որպես կրթական նպատակների իրագործման միջոց՝ հստակ ձևակերպված թեմայով, կանոններով և գնահատման չափո-

րոշիչներով:

Բանավեճի կազմակերպման առանցքային բաղադրիչներից է դասավանդողի ակտիվ մասնակցությունը գործընթացի բոլոր փուլերում՝ թեմայի ընտրությունից մինչև վերջնական վերլուծություն և արձագանք: Դասավանդողը հանդես է գալիս ոչ միայն որպես կազմակերպիչ, այլ նաև որպես մոդերատոր, կողմնորոշող և գնահատող անձ: Նրա դերը կարևոր է բանավեճի կառուցվածքի սահմանման, խմբերի ձևավորման, աղբյուրների ընտրության, ժամանակի բաշխման և ուսումնական արդյունքների ամփոփման փուլերում:

Բացի այդ, մեթոդական աշխատանքը պետք է ներառի նաև սովորողների նախապատրաստում՝ ինչպես առարկայական, այնպես էլ հաղորդակցական և վերլուծական հմտությունների զարգացման առումով: Միայն այսպիսի համալիր մոտեցման դեպքում է բանավեճը վերածվում արդյունավետ ուսուցման գործիքի, որը միաժամանակ խթանում է թե՛ ինտելեկտուալ, թե՛ սոցիալ-հոգեբանական հմտությունների զարգացումը:

Բանավիճային տարրերով դասընթացի արդյունավետ կազմակերպման համար դասավանդողը պետք է կատարի մի քանի ալգորիթմական քայլեր.

1. **Նպատակի և խնդիրների ձևակերպում:** Սահմանվում է, թե որ կրթական նպատակին է ծառայելու բանավեճը՝ օրինակ՝ փաստարկման կարողությունների զարգացում, վերլուծական մտածողության ձևավորում կամ ուսումնասիրված նյութի ամրապնդում:
2. **Թեմայի ընտրություն:** Թեման պետք է լինի արդիական, հետաքրքիր և համապատասխանի սովորողների պատրաստվածության մակարդակին: Օրինակ, հասարակագիտության դասընթացի համար կարող է ընտրվել հետևյալ հարցը. «Պե՞տք է արդյոք սահմանափակել անհատի իրավունքները՝ հանրային անվտանգության ապահովման համար»:
3. **Ձևաչափի ուսումնասիրում:** Դասավանդողը պետք է ծանոթ լինի ընտրված բանավիճային ձևաչափի կառուցվածքին՝ լինի դա դասական բանավեճ, «կլոր սեղան» քննարկում, թե խորհրդարանական լսումների մոդելավորում:
4. **Նյութերի նախապատրաստում:** Դասավանդողը նախապես կազմում է տեղեկատվական փաթեթներ, որոնք ներառում են հիմնարար փաստարկներ, հարցեր և աղբյուրներ՝ վերլուծության համար:
5. **Ժամանակի պլանավորում:** Անհրաժեշտ է ճշգրիտ հաշվարկել բանավեճի բոլոր փուլերի տևողությունը, որպեսզի հնարավոր լինի այն անցկացնել դասաժամի շրջանակներում՝ առանց ժամանակի խախտման:

Այս ամենը վկայում է, որ բանավեճը դարձել է կրթական բազմաճյուղ գործիք, որը խթանում է սովորողների քննադատական մտածողությունը, արդյունավետ հաղորդակցումը և գիտելիքի խորացված յուրացումը՝ անկախ ուսուցանվող առարկայից:

Եվ, ի վերջո, այս ուսումնասիրություններն ապացուցում են, որ բանավեճը չի հանդիսանում զուտ դասաժամի ակտիվացման մեթոդ, այլ կրթական

ռազմավարական մոտեցում, որը նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը և ապահովում սովորողների մասնագիտական ու սոցիալական հմտությունների համապարփակ զարգացումը:

Եզրակացություն

Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ բանավեճը կրթական գործընթացում ոչ միայն խթանում է ուսանողների քննադատական և վերլուծական մտածողության զարգացումը, այլ նաև նպաստում է հաղորդակցման, լսելու, փաստարկված արտահայտվելու, համագործակցության, ինքնարտահայտման և ինքնավստահության ձևավորմանը: Բանավեճի մեթոդի կիրառումը ուսումնական գործընթացում խթանում է սովորողների ակտիվ մասնակցությունը, ձևավորում է հիմնավորված կարծիք արտահայտելու կարողություն և նպաստում է համագործակցային ուսուցման միջավայրի ստեղծմանը:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ բանավեճի մեթոդի համակարգված ներառումը ուսումնական ծրագրերում կարող է դիտարկվել որպես ուսուցման որակի բարձրացման կարևոր գործոն, հատկապես հասարակագիտական, իրավական և քաղաքացիական կրթության ոլորտներում:

Այս առումով նպատակահարմար է կրթական ծրագրերում և ուսումնական պլաններում բանավեճի մեթոդի ներառումը՝ որպես.

- դասաժամերի ինտեգրված բաղադրիչ,
- ֆակուլտատիվ կամ ընտրովի դասընթաց,
- արտաուսումնական մասնագիտական ակումբների բովանդակություն,
- միջառարկայական նախագծերի կամ գնահատման այլընտրանքային ձևաչափ:

Այս համատեքստում նպատակահարմար է նաև ապահովել ուսուցիչների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումը՝ ուղղված բանավեճի մեթոդաբանության արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև մշակել համապատասխան մեթոդական ուղեցույցներ, որոնք կսահմանեն բանավեճի կազմակերպման փուլերը, դերաբաշխման սկզբունքները և գնահատման չափորոշիչները:

Այս հոդվածում փորձ արվեց ցույց տալ, որ բանավեճը արդյունավետ է դիտարկել որպես պարտադիր ուսուցման մեթոդ այն առարկաների շրջանակներում, որոնք ենթադրում են վերլուծություն, դիրքորոշման ձևավորում, հանրային խոսք և սոցիալական փոխգործակցություն, ինչպիսիք են՝ քաղաքագիտությունը, պատմությունը, գրականությունը, հասարակագիտությունը, աշխարհագրությունը, իրավագիտությունը և այլն:

Այսպիսով, բանավեճը կրթության մեջ այսօր այլևս պարզապես մեթոդ չէ, այլ ռազմավարական մոտեցում է, որը միտված է ձևավորելու գիտակից, նախաձեռնող և մտավորապես ազատ մտածողություն ունեցող սերունդ:

Օգտագործված գրականության ցանկ

Ամիրջանյան, Յու. Ա., Սահակյան, Ա.Ս. (2005). *Մանկավարժություն*, Մանկավարժ հրատարակչություն:

Խաչատրյան, Ս. (2020). *Ուսուցման արդյունավետ հնարներ,* Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան:

Հովհաննիսյան, Հ.Օ. (2019). *Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն,* Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

Մալխասեանց, Ս. (1944). *Հայերէն բացատրական բառարան,* Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն:

Дебаты на уроке: https://newuroki.net/kopilka-uchitelja/debaty-na-uroke/

Кессиди, Ф.Х. (1988). *Сократ.* М.

Bartanen, Michael D. & Littlefield, Robert S. (2015) (2014). Competitive Speech and Debate: How Play Influenced American Educational Practice. *American Journal of Play,* 7(2), 155–173

Broda-Bahm, K., Kempf, D., & Driscoll, W. (2004). *Argument and Audience: Presenting Debates in Public Settings.*

Fosnot, C.T. (2005). *Constructivism: Theory, Perspectives, and Practice.* Teachers College Press

Goodwin, J. (2003). *Students' Perspectives on Debating in the Classroom.*

Kennedy, R.R. (2007). *In-Class Debates: Fertile Ground for Active Learning and the Cultivation of Critical Thinking and Oral Communication Skills.*

King, P. M. & Kitchener, K. S. (2004). Reflective judgment: Theory and research on the development of epistemic assumptions through adulthood. *Educational Psychologis,* 39(1), 5–18.

Omelicheva, M. Y. (2007). *Resolved: Academic Debate Should Be a Part of Political Science Curriculum.*

Roy, D., & Macchiette, B. (2005). *Debating the Issues: A Tool for Augmenting Critical Thinking Skills of Marketing Students.*

Snider, A., & Schnurer, M. (2006). *Many Sides: Debate Across the Curriculum.*

Zare, P., & Othman, M. (2013). *Classroom Debate as a Systematic Teaching/Learning Approach.*

Айарпи Кешишян
Руководитель дебатного клуба обучающихся Учебного комплекса МВД Республики Армения
Эл. адрес: hayarpikeshishyan2018@gmail.com

ДЕБАТЫ КАК АКТИВНЫЙ МЕТОД ОБУЧЕНИЯ

В данной статье рассматриваются дебаты как активный метод обучения, с акцентом на их роль в современном образовательном процессе. Представлены теоретические основы, возможности развития учебных результатов и профессиональных навыков посредством дебатов, а также анализируется

потенциал их применения в учебной среде в рамках различных курсов.

Статья освещает значение дебатов в обеспечении активного участия обучающихся, приводит примеры эффективного использования дебатов в образовательной практике и научные обоснования этого подхода.

Проанализированы методические аспекты внедрения дебатов, роль преподавателя в их организации, а также развитие у обучающихся критического мышления, коммуникативных и командных навыков как результата применения дебатного метода.

В заключение делается вывод, что дебаты являются не только методом обучения, но и стратегическим инструментом личностного и профессионального становления обучающихся.

Ключевые слова: активный метод обучения, дебаты, критическое мышление, коммуникативные навыки, аналитические способности, гражданское сознание, образовательный процесс.

Hayarpi Keshishyan
Head of the Debate Club of the Students at the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
Email: hayarpikeshishyan2018@gmail.com

DEBATE AS AN ACTIVE LEARNING METHOD

This article examines debate as an active learning method, emphasizing its role in the modern educational process. The theoretical foundations, the possibilities of developing learning outcomes and professional skills through debate are presented, and the possibility of using debate in the educational environment within the framework of various courses is considered.

The article considers the role of debate in ensuring the active participation of learners, and also presents examples and scientific justifications of debate as an effective learning method.

The methodological aspects of introducing debate, the role of the teacher in its organization, as well as the strengthening of critical thinking, communication and teamwork skills in learners as a result of using debate are analysed.

At the end of the article, a conclusion is made that debate is not only a learning method, but also a strategic tool for the personal and professional development of learners.

Key words: active learning method, debate, critical thinking, communication skills, analytical abilities, civic awareness, learning process.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. հուլիսի 14-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. սեպտեմբերի 12-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: